«ՅԱՂԱԳՍ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՁԱՅՆԻՑ» ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ. ԱՆԱՆԻԱ ՆԱՐԵԿԱՑԻ, ԹԵ՞ ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ

ԱՆՆԱ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

Հայ միջնադարյան երաժշտատեսական և գեղագիտական մտքի բնորոշ դրսևորում են այսպես կոչված, «ձայնից» մեկնությունները, որոնք ներկայացնում են եկեղեցու կողմից հաստատագրված կանոնական ձայնեղանակների տեսական իմաստավորումն ու աստվածաբանական, երաժշտագեղագիտական և տեսական մեկնաբանությունը: Այդ գրվածքների շարքում իր կայուն տեղն ունի «Յաղագս գիտութեան ձայնից» մեկնությունը[1]: Մատենագրական այս միավորին անդրադարձել ենք բազմիցս, չբարձրացնելով, սակայն, նրա հեղինակային պատկանելության հարցը:

Տարիներ առաջ երջանկահիշատակ երաժշտագետ Ն. Թահմիզյանը տվյալ մեկնությունը վերագրել էր X դ. հայտնի մատենագիր, ծիսագետ, մանկավարժ՝ Նարեկա վանքի վանահայր Անանիա Նարեկացուն[2]: Վկայակոչելով Ուխտանես պատմիչին՝ Թահմիզյանը նշել է, որ «Անանիա անունով մեզ ծանոթ վարդապետներից ամենահայտնի երաժիշտն է Անանիա Նարեկացին»: Հարց է ծագում՝ իսկ ինչո՞ւ ոչ Անանիա Շիրակացին: Թեև Ուխտանեսն իր Պատմության մեջ, անդրադառնալով Անանիա Նարեկացուն, ով եղել է նրա ուսուցիչն ու բարեկամը, ուղղել է նրան հետևյալ խոսքերը՝ «եւ աստուածային շնորհիւ պայծառացեալ, եւ ձրիւք սուրբ հոգւոյն առլցեալ գիտութեամբ, եւ հոգեւորական երգով գեղգեղմամբ գեր ի վերոյ քան ամենեսեան»[3], այնուամենայնիվ, Անանիա Նարեկացու անունով երաժշտական կամ երաժշտատեսական բնույթի որևէ ստեղծագործություն, երկասիրություն մեզ չի հասել: Անանիա Նարեկացուն և Նարեկա վանքի երաժշտական ավանդույթներին

---

[1] *Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 6031, 1404 թ., էջ 183ա–184ա, 1719, 1615–1616 թթ., Լվով, էջ 38ա–38բ:*

[2] *Տե՛ս Ն. Թահմիզյան. Հայ հին և միջնադարյան երաժշտության քննական պատմություն.– ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1971, -1, էջ 56:*

[3] *Ուխտանես եպիսկոպոս, Պատմութիւն, Փարիզ, 1871, էջ 8:*

Թահմիզյանն անդրադարձել էր նաև ավելի ուշ, սակայն առանց խնդրո առարկա մեկնության արծարծման[4]:

Մեր ուսումնասիրությունը թույլ է տալիս ենթադրելու, որ այդ մեկնության հեղինակը VII դ. հանրագիտակ գիտնական, նշանավոր մաթեմատիկոս, աստղագետ, աշխարհագրագետ, շարականագիր և երաժշտության տեսաբան Անանիա Շիրակացին է:

Մեր վարկածը հիմնված է հետևյալ տրամաբանության վրա: Նվիրվելով հիմնականում քառյակ գիտությունների ոլորտին, որի մեջ էր մտնում նաև երաժշտությունը, Անանիա Շիրակացին, քաջատեղյակ է եղել նորպլատոնականների գիտական նվաճումներին: Իրականացրել է Նիկոմախոս Գերազացու թվաբանական տասնական աղյուսակի հայկական տարբերակը, աղյուսակ, որի տառ-անդամներն ունեին նաև երաժշտատեսական մեկնություն: Նա զբաղվել է հնչյունաբանության (ակուստիկայի) հարցերով, ուստի չէր կարող շրջանցել նաև Ութձայն համակարգի տեսությունը:

Ուշագրավ է Անանիա Շիրակացու՝ որպես երաժշտության գեղագետի երկնային ոլորտների ներդաշնակության (harmonia mundi) պլատոնական տեսությանը հարող հայտնի ասույթն այն մասին, թե «զգայարանքն առաջնոցն սուր էին քան զայժմոց՝ զոր վկայեն բազումք. Վասն որոյ ոչ միայն զարեգականն գնացս կարացին նկատել, այլ եւ զբոլոր լուսաւորչացս կարացին դիտել եւ ճանաչել: Եւ ոչ միայն զորպիսութիւն գնացիցն՝ այլեւ զհնչումն ձայնից նոցա. Եւ ի սոցանէ գտաւ արուեստ երաժշտականութեան աշխարհի»[5]:

Շարականագիրների միջնադարյան ցուցակները Շիրակացուն են ընծայում Հարության ամբողջ հարցնակարգը, այսպես. «զՅարութեան հարցնակարգն զբովանդակն՝ Անանիա Շիրակացին»[6], ինչպես նաև՝ մի շարք այլ շարականներ, որոնք այսօր էլ երգվում են մեր եկեղեցում: Դրանց թվում՝ «Վասն մերոյ փրկութեան» Հանգստյան կարգի ծանր Գձ ողորմեան, Վարդավառի առաջին օրվա կանոնի «Ուրախացիր, պսակ կուսից» ճաշուն, սրբոց թարգմանչաց հին կանոնի մի մասը և այլն: «զՅարութեան հարցնակարգն զբովանդակն» արտահայտությունից պետք է հասկանալ, որ Անանիա Շիրակացին իրականացրել է ծիսակարգի պահանջներից բխող ստեղծագործական մի ծրագիր, որն ընդգրկում էր Ութձայնի բոլոր ձայնեղանակներում երգվող հարցերի

---

[4] *Տե՛ս Ն. Թահմիզյան. Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V–XV դդ., Երևան, 1985, էջ 50–54:*

[5] *Տե՛ս Անանիա Շիրակացի. Տիեզերագիտութիւն և տոմար, աշխ. Ա. Աբրահամյանի, Երևան, 1940, էջ 83–84:*

[6] *Տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Սրբոց Յակոբեանց վանքի, կազմեց Նորայր եպս. Պօղարեան, հ. Դ, Երուսաղէմ, 1956, էջ 485, տե՛ս նաև հ. Բ, Երուսաղէմ, 1953, էջ 629:*

հորինումը: Այդ ծրագիրը համեմատելի է դարձյալ Զատկական շաբաթվա համար նախատեսված և նույնպես Ութձայնի բոլոր ձայնեղանակներն ընդգրկող Ստեփանոս Սյունեցու 80 երգից բաղկացած Ավագ օրհնությունների շարքի ստեղծման հետ: Հիշեցնենք, որ VII–VIII դարերում Ութձայն համակարգի կարգավորությունը ողջ արևելաքրիստոնեական աշխարհի, այդ թվում նաև հայ եկեղեցու հրատապ խնդիրներից էր: Այդ գործին իրենց մասնակցությունն էր բերել, օրինակ, Շիրակացու ժամանակակիցներից Բարսեղ Ճոնը, որը Ներսես Տայեցի կաթողիկոսի հրամանով շրջել է Հայաստանի տարբեր գավառներով՝ եկեղեցական երգեցողությունը միակերպության բերելու նպատակով: Դրա արդյունքում նա կազմեց արդեն շրջանառության մեջ եղած հոգևոր երգերի «Ճոնընտիր» ժողովածուն, որը, բնականաբար, պետք է գաղափարված լիներ ըստ Ութձայն համակարգի, այդպիսով հիմք դառնալով Ստեփանոս Սյունեցու կարգավորած ապագա Շարակնոցի համար: Այսինքն, շարականագիրների միջնադարյան ցուցակների հաղորդած միահամուռ տեղեկությունը Անանիա Շիրակացու՝ Հարության ողջ հարցնակարգի հեղինակ լինելու վերաբերյալ, մատնանշում է ծանրակշիռ ստեղծագործական և միաժամանակ տեսական մի ծրագիր:

Այժմ ներկայացնենք խնդրո առարկա մեկնությունը:

Ուշագրավ է մեկնության վերնագիրը՝ «Յաղագս գիտութեան ձայնից», ինչը որևէ այլ «ձայնից» մեկնության մեջ չի հանդիպում ընդհուպ մինչև Գրիգոր Գապասաքալյան, որն ընկալում էր ձայնագիտությունը իբրև գիտություն, այն էլ «գաղտնի գիտություն»[7]: Դա մեկ կողմից բնորոշում է Անանիա Շիրակացու ձայնեղանակների տեսության ընկալումը որպես գիտություն, մյուս կողմից՝ միանգամայն համահունչ է նորպլատոնականների կամ նորպյութագորյանների առաջ քաշած ձայնեղանակների տեսության հայեցակարգին:

Մեկնության մեջ Շիրակացին իրեն դրսևորում է որպես եկեղեցական ծեսին քաջատեղյակ հեղինակ և շարականագետ: Եկեղեցական կանոններից հիշատակված են տաճարի նավակատիքը, պղծված տաճարի մաքրագործման կանոնը, եկեղեցօրհնեքը և խաչօրհնեքը, իսկ համաքրիստոնեական երգասացություններից՝ «Փառք ի բարձունս» երգը, «Աւրհնեսցուք զՏէր» օրհնությունը և հարցը, ինչպես նաև՝ «Հավատամք»-ը և «Միածին»-ը: Վերջին երկուսի մասին հեղինակը հայտնում է, որ դրանք հաստատել են սուրբ հայրերը, այսինքն՝ սուրբ Մաշտոցը և Սահակ Պարթև կաթողիկոսը:

---

[7] *Տե՛ս Գ ր. Գ ա պ ա ս ա ք ա լ ե ա ն. Գիրք երաժշտական, Կոստանդնուպոլիս, 1803, էջ 70, 82–83, 93: Այդ մասին մանրամասն տե՛ս նաև՝ Ա. Ա ր և շ ա տ յ ա ն. Գրիգոր Գապասաքալյանի երաժշտագիտական ժառանգությունը, Երևան, 2013, էջ 79, նույնի՝ Գրիգոր Գապասաքալյանի «Գիրք ութից ձայնից» ձեռնարկը.– «Մանրուսում» միջազգային երաժշտագիտական տարեգիրք, հ. Գ, Երևան, 2009, էջ 231:*

Հիշեցնենք «Յաղագս գիտութեան ձայնից» մեկնության բնագիրը. «Առաջինն յԱդամայ սկսաւ, զի նմա տուաւ առաջին ձայն, զոր կորոյս: Եւ Տեառն մարդեղութեամբ երգեցին հրեշտակք՝ զՓառք ի բարձունս: Առաջի կողմ Մովսէս երգեաց՝ Աւրհնեցէք զՏէր, եւ մանկունք՝ զՀարցն: Երկրորդ ձայն՝ ի Սինեայ բարբառ փողոյն: Նոյն ձայնիւ աւետեցին հրեշտակք կանանցն զՅարութիւն: Երկրորդ կողմ՝ Յեսուայ է փողն շուրջ գալ զԵրիքովու, Սամուէլ եւ դասք մարգարէիցն: Երրորդ ձայն Դաւիթ եւ դասք երգչացն եւ Սուրբ Հոգին ի վերնատանն յառաքեալսն: Երրորդ կողմ՝ Մովսէս ի նաւակատիսն խորանին եւ Սողոմոն ի նաւակատիսն տաճարին: Չորրորդ ձայն՝ Եզրաս ի գալն Երուսաղէմ եւ նուագելն ի տաճար: Յայս ձայնս զՀաւատամքն եւ զՄիածինն եղին սուրբ հարքն: Չորրորդ կողմ՝ զտաճարին պղծիլն սրբէին: Նովին՝ եկեղեցաւրհնէքն եւ խաչաւրհնէքն: Իսկ ստեղն՝ Եսայի լուաւ զսրովբէից սրբասացութիւն: Ընդ ամենայն Ժ, որ է թիւ կատարեալ, վասն զի Ժ աստիճանաւ եւ Ժ ձայնիւ պատուեց Աստուած զանմարմինս եւ զմարմնաւորսն, զոր յիմանալի աշխարհ բաղկացոյց Ժ դասք աւրհնաբանիչս իւր, եւ կարգապետեալ յիմանալի խորանին, յորոյ մինն ատորանկեալ անարժան գտաւ աւրհնելոյն»[8]:

Վերջին պարբերությունը համընկնում է Մովսես Քերթողահոր «Յաղագս կարգաց եկեղեցւոյ» երկի ձայնեղանակների մեկնության եզրափակիչ հատվածին. «որ զիմանալի աշխարհն բազկացոյց, տասն թուովք աւրհնաբանիչս իւր կարգապետեաց իմանալի խորանին, յորոց մինն ստոր անկեալ, յաւրհնելոյն զԱստուած անարժան գտաւ»[9]:

Բոլոր ձեռագրերում, ուր գտնում ենք «Յաղագս գիտութեան ձայնից» մեկնությունը, բերվում է «Անանիայի վարդապետի Յաղագս գիտութեան ձայնից» խորագիրը՝ առանց որևէ որոշակիացման: Ն. Թահմիզյանն ընծայել է այդ գրվածքը Անանիա Նարեկացուն՝ չփաստարկելով իր վարկածը: Մեր կարծիքով, ավելի քան տրամաբանական է այդ մեկնությունը վերագրել Անանիա Շիրակացուն, որը, լինելով հմուտ շարականագիր և ձայնագետ, հանդիսանում է այդ մեկնության իսկական, իրական հեղինակը:

Ուշագրավ է, որ Անանիա Շիրակացու սեփական շարադրանքին հետևում է բառացիորեն մեջբերված «Յաղագս կարգաց եկեղեցւոյ»՝ ձեռագրերում Մովսես Քերթողահորը մշտապես ընծայվող հայտնի գրվածքը, ինչը, եթե ընդունենք «Յաղագս գիտութեան ձայնից» մեկնությունը որպես Անանիա Շիրակացու երկասիրություն, գալիս է հաս-

---

[8] *Տե՛ս Ա. Արևշատյան. Հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններ, Երևան, 2003, էջ 120, նույնի՝ Հայնեղանակների ուսմունքը միջնադարյան Հայաստանում, Երևան, 2013, էջ 218–219:*

[9] *Նույն տեղում, էջ 120:*

տատելու, որ «Յաղագս կարգաց եկեղեցւոյ» գրվածքի հեղինակը Մովսես Խորենացին է, այլ ոչ թե Մովսես Սյունեցին, ինչպես դա պնդում է Թահմիզյանն իր «Մովսես Սյունեցին և իր «Յաղագս կարգաց» գրվածքը» հայտնի հոդվածում[10], փոխարինելով բոլոր ձեռագրերում անխտիր կրկնվող «Մովսէսի Քերթողահաւր» ՝ շատ որոշակի արտահայտված հեղինակային պատկանելության ցուցումը «Մովսէսի Քերթողի», այսինքն ՝ Սյունեցու անունով:

Բնական է, որ ոսկեդարյան ավանդույթների ժառանգորդ Անանիա Շիրակացու համար մեծագույն հեղինակություն պետք է լիներ ժամանակագրական առումով իրեն բավական մոտ ապրած պատմահայր և շարականագիր Մովսես Խորենացին: Այդ է պատճառը, որ նա սեփական «ձայնից» մեկնությանը կցել է նրա «Յաղագս կարգաց» երկի ձայնեղանակների մեկնությանը նվիրված մասը, հավանաբար, բարձր գնահատելով այդ երկի արժանիքները և նրանում արծարծված աստվածաբանական, ծիսագիտական, ձայնագիտական ու գեղագիտական հարցերի կարևորությունը:

Այսպիսով, ըստ մեր առաջարկած տեսակետի ՝ Անանիա Շիրակացու երկասիրությունների ցանկին կարելի է հավելել «Յաղագս գիտութեան ձայնից» մեկնությունը, որը Շիրակացու մտածողության համապարփակ լինելու հավելյալ մի ապացույց է ՝ նրան ներկայացնելով որպես իր ժամանակի հանճարեղ գիտնական և արվեստագետ:

К ВОПРОСУ ОБ АВТОРЕ ТОЛКОВАНИЯ «О НАУКЕ ГЛАСОВ»: АНАНИЯ НАРЕКАЦИ ИЛИ АНАНИЯ ШИРАКАЦИ?

АННА АРЕВШАТЯН

Резюме

В ряду армянских средневековых толкований на гласы текст «О науке гласов» занимает постоянное место. В начале 1970-х гг. известный музыковед Н. Тагмизян приписал данное толкование автору X в. Анании Нарекаци, не имея на то достаточных оснований.

Наше исследование позволяет утверждать, что автором этого толкования на самом деле является выдающийся математик, астроном, гимнограф и теоретик музыки VII в. Анания Ширакаци. Гипотеза основана на том, что посвятив себя точным наукам, к которым, согласно античной и средневековой теории, относилась и музыка, Анания Ширакаци, уделивший в своих трудах место вопросам акустики и являющийся автором полного Пасхального цикла песнопений «Отцев» по всем восьми гласам, не обошел вниманием и теорию Восьмигласия. Не случайно он присоединил к собственному

[10] *Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1972, -11, էջ 85–94:*

тексту известное сочинение Мовсеса Кертохахайра «О чинах церкви», первая часть которого представляет собой не что иное, как богословское, эстетическое и музыкально-практическое толкование системы Восьмигласия армянской церкви. В этом видится отношение самого Анании Ширакаци к богословско-эстетическим и музыкально-теоретическим достоинствам толкования Мовсеса Кертохахайра, по всей видимости, являющегося для Анании непререкаемым авторитетом в области теории и эстетики духовного песнетворчества.

ON THE QUESTION OF THE AUTHOR OF THE WORK *ABOUT THE SCIENCE ON MUSICAL MODES:* ANANIA NAREKATSI OR ANANIA SHIRAKATSI?

ANNA AREVSHATYAN

S u m m a r y

The work *About the Science on Musical Modes* has its stabile place among the Armenian interpretations of modes. At the beginning of the 1970s it was attributed, without sufficient reason, to Anania Narekatsi (10th century) by prominent musicologist N. Tahmizian.

Our investigation allows to conclude that the author of this interpretation is in fact Anania Shirakatsi, a distinguished mathematician, astronomer, hymnographer and theoretician of music of the 7th century. Our hypothesis is founded on the following argumentation. Having devoted himself to exact sciences, among which music was as well, according to the antique and medieval theory, Anania Shirakatsi dealt in his works with issues of acoustics and was the author of the Easter cycle of canticles *Fathers*, on all eight modes and, of course, he didn't neglect the theory of the Octoechos system.

It is not fortuitously that he added to his own text the famous work *About the Church Canons* by Movses, Father of the Armenian historiography, first part of which is nothing else than the theological, esthetical and musical-practical interpretation of the Octoechos system of the Armenian Church. One can see here the attitude of Anania Shirakatsi himself towards the great theological-esthetical and musical-theoretical values of the interpretation by Movses Khorenatsi, as Shirakatsi must have venerated him as a great authority in the field of sacred chanting theory and esthetics.